

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/7

1 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «ԷԿՕ ՄԱՍ» ՍՊԸ-ի 30.07.2015 թ-ի դիմում-բողոքը հսկիչ-դրամարկղային մեքենայով թյուրիմացաբար ավել մուտքագրված գումարը որպես հասույթ չդիտարկելու վերաբերյալ:

«ԷԿՕ ՄԱՍ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

2014թ.-ի հունիսի 30-ին «ԷԿՕ ՄԱՍ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև կազմակերպություն) գ.Սարիգյուղ հասցեում գործող ավտոգազալիցքավորման կայանում հաճախորդի մեքենան լիցքավորելուց և գումարը կանխիկ ստանալուց հետո հաճախորդին սխալմամբ տրամադրվել է 548 000 դրամին համարժեք ՀԴՄ կտրոն: Նույն օրը մեկ այլ հաճախորդի սխալմամբ տրամադրվել է 311 600 դրամի ՀԴՄ կտրոն: Երկու դեպքերում էլ, աշխատակիցը նկատել է, որ սխալմամբ կանխիկ ստացած գումարից մեծ գումար է տպվել ու այդ մասին տեղյակ է պահել տնօրինությանը: Այնուհետև կազմվել է հունիս ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարված վերադարձի սխալմամբ գրանցման մասին տեղեկանք՝ 2 օրինակից և ներկայացվել Իջևանի ՏՀՏ: Իջևանի ՏՀՏ-ի կողմից օրինակը հաստատվել և հետ է վերադարձվել կազմակերպությանը: Ավել տպված գումարները չեն մասնակցել տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և շահութահարկի հաշվարկներում:

Այնուհետև 26.06.2015 թ-ին Իջևանի ՏՀՏ-ից կազմակերպությունը ստացել է կամերալ ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ արձանագրություն, համաձայն որի 2014 թ-ի ընթացքում ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկների արդյունքում հաշվարկված իրացման շրջանառությունը չի համապատասխանում ֆիսկալ հասույթին 859 600 դրամի չափով, որը հավասար է 2014 թ-ի հունիսի 30-ին սխալ տպված գումարների հանրագումարին: Տարբերության պատճառը կայանում է նրանում, որ հարկային մարմնի կողմից հաշվի չի առնվել թղթային տարբերակով ՏՀՏ ներկայացված վերը նշված տեղեկանքը:

Կազմակերպությունը խնդրում է հարկային մարմին ներկայացված տեղեկանքը համարել ընդունված և հարկային մարմնում արտացոլված ֆիսկալ հասույթը նվազեցնել համապատասխան գումարի չափով:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 2014 թ-ի հունիսի 30-ին «ԷԿՕ ՄԱՍ» ՍՊԸ-ի ավտոգազալիցքավորման կայանի աշխատակցի կողմից հաճախորդի մեքենան լիցքավորելուց և գումարը կանխիկ ստանալուց հետո սխալմամբ ՀԴՄ է մուտքագրվել

և հաճախորդին տրամադրվել 548 000 դրամին համարժեք ՀԴՄ կտրոն: Նույն արարքը կրկնվել է նաև մեկ այլ հաճախորդի հետ, մասնավորապես՝ սխալմամբ ՀԴՄ է մուտքագրվել և հաճախորդին է տրամադրվել 311 600 դրամի ՀԴՄ կտրոն:

Կազմակերպության աշխատակիցը նկատել է, որ վերը նշված երկու դեպքերով կանխիկ ստացված գումարից մեծ գումար է մուտքագրել ՀԴՄ և այդ մասին տեղյակ է պահել տնօրինությանը:

Կազմակերպությունը տեղի ունեցածի վերաբերյալ տեղեկացրել է Իջևանի ՏՀՏ-ին: Մասնավորապես, 03.07.2014 թ-ին կազմվել է 2014 թ-ի հունիս ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարված վերադարձի և գումարների՝ սխալմամբ գրանցման մասին տեղեկանքը, որի մեկ օրինակը ներկայացվել է Իջևանի ՏՀՏ: Իջևանի ՏՀՏ-ի կողմից նշված տեղեկանքի օրինակը հաստատվել և հետ է վերադարձվել կազմակերպությանը:

Կազմակերպությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոգրյալ տեղեկանքի միջոցով հարկային տեսչությանը տեղեկացրել է ՀԴՄ ավել մուտքագրված գումարների մասին, դրանց շրջանառությունը չի ներառել տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ-ի և շահութահարկի հաշվարկներում: Սակայն, Իջևանի ՏՀՏ 26.06.2015 թ-ի կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների, անճշտությունների, խախտումների վերաբերյալ թիվ 142/2015 արձանագրությունում նշվել է, որ 2014 թ-ի ԱԱՀ-ի հաշվարկներում Կազմակերպության իրացման շրջանառությունը պակաս է ֆիսկալ հասույթից 859 600 դրամի չափով, ինչպես նաև լրացված չէ շահութահարկի հաշվարկի 18.2 տողը:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 01.08.2013 թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 25-րդ կետի համաձայն. «ՀԴՄ կտրոնի փակումից (տպագրումից) հետո թույլ տրված սխալների բացահայտման, ապրանքի գնումից գնորդի կամ ծառայություն ստացողի լրիվ կամ մասնակի հրաժարվելու, գնված ապրանքի փոխարեն այլ ապրանք գնելու դեպքերում ՀԴՄ կտրոնը և գնման գործարքը չեղյալ կարող են համարվել միայն ՀԴՄ կտրոնի (ապրանքի վերադարձ, ծառայությունից հրաժարում) վերադարձ ձևակերպելու միջոցով: ՀԴՄ կտրոնի վերադարձը ՀԴՄ-ում արձանագրվում է համապատասխան ստեղծի (ծրագրի համապատասխան ֆունկցիայի) միջոցով»:

Կարգի 26-րդ կետի համաձայն. «ՀԴՄ-ի կտրոնի վերադարձ կարող է ձևակերպվել միայն ՀԴՄ-ի կտրոնի փաստացի վերադարձի դեպքում: Վերադարձի ձևակերպման ժամանակ տպվում է վերադարձի ՀԴՄ-ի կտրոն: ՀԴՄ-ի վերադարձված կտրոնի վրա կատարվում է «Վերադարձ» նշումը և վերադարձի կտրոնի հետ պահպանվում է տպելու օրվան հաջորդող երեք տարիների ընթացքում: Համապատասխան պահանջի դեպքում ՀԴՄ-ի վերադարձված կտրոնը և վերադարձի կտրոնը ներկայացվում են ստուգում կամ ուսումնասիրություն (բացառությամբ հարկային մարմնի կողմից իրականացվող կամերալ ուսումնասիրությունների) անցկացնող անձանց: Նշված ժամկետում ՀԴՄ կտրոնը չպահպանվելու կամ ստուգում կամ ուսումնասիրություն իրականացնող անձանց չներկայացվելու դեպքերում՝ ՀԴՄ կտրոնի «Վերադարձ» ձևակերպելու միջոցով իրացման (հարկվող) շրջանառության նվազեցումը համարվում է չհիմնավորված»:

Քննարկվող դեպքում Կարգի 25-րդ կետով սահմանված է, որ ՀԴՄ կտրոնի փակումից (տպագրումից) հետո թույլ տրված սխալների բացահայտման դեպքերում ՀԴՄ կտրոնը և գնման գործարքը կարող է չեղյալ համարվել միայն ՀԴՄ կտրոնի (ապրանքի վերադարձ, ծառայությունից հրաժարում) վերադարձ ձևակերպելու միջոցով: Սակայն Կարգով սահմանված չէ, թե ինչ ժամկետում պետք է իրականացվի ՀԴՄ կտրոնի վերադարձի ձևակերպումը, այն դեպքում, երբ ՀԴՄ կտրոնի փակումից (տպագրումից) հետո երկու ամիս անցնելուց հետո համակարգը թույլ չի տալից իրականացնել ՀԴՄ կտրոնի վերադարձի ձևակերպումը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը գտնում է, որ Կարգով ՀԴՄ կտրոնի վերադարձի ձևակերպման ժամկետ սահմանված չլինելու և ՀԴՄ կտրոնի փակումից (տպագրումից) հետո երկու ամիս անցնելուց հետո համապատասխան ձևակերպման իրականացումը համակարգի կողմից սահմանափակվելու պայմաններում, Կազմակերպությունը, ըստ էության, զրկվել է ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքից օգտվելու հնարավորությունից: Այսինքն՝ կարելի է փաստել, որ ստեղծված իրավիճակում բացակայում է Կազմակերպության մեղքը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Կազմակերպության բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

«ԷԿՕ ՄԱՍ» ՍՊԸ-ի 30.07.2015 թ-ի դիմում-բողոքը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

